## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
## Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Վեբ կայք՝ www.minfin.am, ֆիննախ.հայ
Էլ. փոստ՝ secretariat@minfin.am
Հեռ.՝ (+374 11) 800 156

N ______________________________

<<_______>> ________________20 թ.

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Հայաստանի Հանրապետության և Սինգապուրի Հանրապետության միջև ծառայությունների առևտրի և ներդրումների մասին» համաձայնագրի նախագծով՝ Հայաստանի Հանրապետության համար ֆինանսական պարտավորություններ նախատեսող դրույթների առկայության մասին**

Նախագծում առկա են դրույթներ (3.7-րդ հոդված՝ կատարված ներդրումների հետ կապված վնասները ենթակա են վերականգնման, հատուցման, փոխհատուցման կամ այլ ձևով կարգավորման եթե դրանք առաջացել են պատերազմի կամ այլ զինված հակամարտության, հեղափոխության, արտակարգ իրավիճակների, խռովության, քաղաքացիական անկարգությունների կամ որևէ այլ նմանատիպ իրադարձությունների պատճառով, ինչպես նաև այն վնասները որոնք առաջացել են ուժային կառույցների կամ իշխանությունների բռնագրավման կամ այդ ներդրումների ոչնչացման հետևանքով, ինչը չի պահանջել տվյալ իրավիճակի անհրաժեշտությունը, 3.11-րդ հոդված՝ կատարված ներդրումների ազգայնացման, պետականացման պարագայում ենթակա են համարժեք և արդյունավետ փոխհատուցման վճարման, 3.19-րդ հոդված՝ արբիտրաժի միջոցով վեճը հաղթող կողմին փոխհատուցել այն ողջամիտ ծախսերն ու փաստաբանի ծառայությունների հետ կապված վճարները, որոնք վերջինս կրել է առարկության ներկայացնելիս կամ դրա հետ չհամաձայնելիս, 3.22-րդ հոդված՝ տրիբունալի որոշմամբ պարտվող կողմը կրում է (կամ մասնակի) վարույթի հետ կապված ծախսերը, այլ ողջամիտ ծախսերը, այդ թվում

իրավական ներկայացուցչության և օգնության հետ կապված ծախսերը, ինչպես նաև հայցվորը պետք է տրամադրի հայցի ապահովման միջոցներ բոլոր ծախսերի կամ դրանց մի մասի վճարման մասով, 5.18-րդ հոդված՝ յուրաքանչյուր կողմ կրում է իր նշանակված արբիտրի ծախսերը, սեփական ծախսերը և դատական ծախսերը), որի համապատասխան պայմանների ի հայտ գալու դեպքում կարող է հանգեցնել Հայաստանի Հանրապետության համար ֆինանսական պարտավորությունների առաջացմանը, ինչպես նաև ծախսերի ավելացմանը, որի չափը հնարավոր չէ գնահատել :

Միաժամանակ «Հայաստանի Հանրապետության 2019թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով Համաձայնագրին առնչվող պարտավորություններ նախատեսված չեն:



ԱՐՄԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Կատարող՝ Անի Սարգսյան
Միջազգային համագործակցության վարչություն
Հեռ.՝ (011) 800 319